

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՄԱ-ՄԱԾՁԲ-18/7**

ք. Երևան

«14» փետրվարի 2018թ.

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Գ.Մանոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման, անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման, և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 67 275 905 (վաթսուներե միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական քննութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>1</sup>

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության անկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, զուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

<sup>1</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ անբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ անբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն անբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության  
կարգավորման ՊԿ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
ՀՀ ՖՆ գործառն. Կարգ.  
ՀՀ 900011040020  
ՀՎՀՀ 02705793  
Աշխատակազմի ղեկավարի պ/կ  
Գ.Մանոյան



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության  
գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
Ինտելոգրանկ  
ՀՀ 2052022100061001  
ՀՎՀՀ 02558849  
Տնօրենի ժ/պ  
Ա.Ամիրջանյան



### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2018 թվականին ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման, անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման, և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման

հրավերով նախատեսված չափաբանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դատակարգման (CPV)	Ծառայության					
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50531140/1	<p><b>1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն</b></p> <p>1.1 Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վրանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:</p> <ul style="list-style-type: none"> <li>Ներկայացված տեխնիկական որոշումների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերվող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում:</li> <li>Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ):</li> <li>Ներկայացված հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):</li> <li>Փորձագիտական եզրակացության մշակում:</li> </ul> <p>1.2 ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ զոնու 30-րդ վերաբեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ զոնու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ</p>	դրամ	67275905	1	ՔԹԵՐԼԱՆ Տիգրան Մեծի 4	15.12.18

գորու ու միջուկային վառելիքի հետ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:

- Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում:
- Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի ակտիվ գոտու մաթեմատիկական մոդելի ձևափոխում:
- Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում:
- Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում:
- Եզրակացության մշակում:

1.3 ՀԱԷԿ-ի հզորության վրա աշխատանքային ռեժիմի վթարային ընթացակարգերի, ժանր վթարների կառավարման ուղեցույցի և դրանց անալիտիկ հիմնավորումների փորձարկումներ:

- Վթարային ընթացակարգերի դիտարկում:
  - А-0 Аварийный останов реактора или включение АПН
  - АД3-0.0 Обесточивание блока
  - АД3-0.1 Восстановление состояния после обесточивания блока без срабатывания АПН
  - АД3-0.2 Восстановление состояния после обесточивания блока со срабатыванием АПН
  - АД-0.1 Срабатывание АЗ-1 рода
  - АД-1.2 Расхолаживание РУ с компенсируемой течью I контура:
- Ծանր վթարների կառավարման ուղեցույցի դիտարկում:
- Ծանր վթարների կառավարման ուղեցույցի անալիտիկ հիմնավորումների դիտարկում:
- Հաշվետվության մշակում:

## 2. ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով սահմանված աշխատանքներ

2.1 ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի առաջին դասի փարրերի, մասնավորապես ռեակտորային փեղակայանքի փարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում:

- ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
- Առաջին դասի տարրերի մեխանիկական հատկությունների գնահատման համար կատարված ջերմահիդրավիկ վերլուծությունների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում:
- Առաջին դասի տարրերի մեխանիկական հաշվարկների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում:
- Ընտրված սցենարների համար ստուգողական վերլուծությունների կատարում:
- Եզրակացության մշակում:

2.2 ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի երկրորդ դասի փարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում:

		<ul style="list-style-type: none"> <li>• ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի ամբողջականության ստուգում:</li> <li>• Երկրորդ դասի տարրերի մեխանիկական հատկությունների գնահատման համար կատարված ջերմահիդրավիկ վերլուծությունների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում:</li> <li>• Երկրորդ դասի տարրերի մեխանիկական հաշվարկների մեթոդաբանության և արդյունքների դիտարկում:</li> <li>• Երկրորդ դասի համակարգերի էլեկտրասնուցման և հսկիչ-չափիչ համակարգերի տարրերի շահագործման ժամկետի երկարաձգումը հիմնավորող հաշվետվությունների դիտարկում:</li> <li>• Ընտրված սցենարների համար ստուգողական վերլուծությունների կատարում:</li> <li>• Եզրակացության մշակում:</li> </ul> <p><b>3. ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ</b></p> <p>3.1 Սառը մամլման խնդրի վերլուծություն CFD ծրագրային կոդի միջոցով, սրացված արդյունքների համեմատում OECD-NEA կողմից անցկացված գիտահետազոտող արդյունքների հետ՝ ՀԱԷԿ-ի անվտանգության վերլուծության համար օգտագործվող մոդելների վալիդացիայի նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գիտահետազոտում օգտագործված իրանի եռաչափ մոդելի մշակում CFD ծրագրային կոդի միջոցով:</li> <li>• Եռաչափ մոդելի մեշավորում:</li> <li>• Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում:</li> <li>• Թվային լուծումների վերլուծություն:</li> <li>• Անորոշությունների քանակավորում:</li> <li>• Հաշվետվության մշակում՝ ներառյալ եզրակացություն մոդելի վալիդացման վերաբերյալ:</li> </ul> <p>3.2 ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի աշխատած միջուկային վառելիքի պահպանման ավազանի վառելիքի և ջերմատարի ջերմատարիճանների լույսը փոփոխությունների որոշում CFD ծրագրային կոդի միջոցով՝ ավազանի հովացման համակարգերի ամբողջական կորստի դեպքում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀԱԷԿ-ի N°2 էներգաբլոկի աշխատած միջուկային վառելիքի պահպանման ավազանի եռաչափ մոդելի մշակում:</li> <li>• Եռաչափ մոդելի մեշավորում:</li> <li>• Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում:</li> <li>• Թվային լուծումների վերլուծություն:</li> <li>• Միաչափ կոդերով հաշվարկման դեպքում ընդունված ենթադրությունների ստուգում:</li> <li>• Հաշվետվության մշակում:</li> </ul> <p>3.3 ՋՋԷԴ-440 ռեակտորի ակտիվ զոդու երկրորդային կրիտիկության մոդելավորում շոգեարար խողովակի պատվածքի դեպքում (մասնակցություն ՋՋԷԴ ռեակտորներ շահագործող երկրների կազմակերպության AER-DYN-005 հաշվարկային հենանիշին)՝ ՀԱԷԿ-ի անվտանգության վերլուծության համար օգտագործվող մոդելների վալիդացիայի նպատակով:</p>					
--	--	---	--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> <li>• Ակտիվ գոտու նեյտրոնաֆիզիկական մոդելի լրամշակում՝ այն համապատասխանեցնելով հենանիշի պայմաններին:</li> <li>• Ուսկտորի ջերմահիդրավիկ մոդելի լրամշակում՝ այն համապատասխանեցնելով հենանիշի պայմաններին:</li> <li>• Լրամշակված մոդելների համակցում:</li> <li>• Եզրային և սկզբնական պայմանների մոդելավորում:</li> <li>• Մոդելավորման արդյունքների վերլուծություն:</li> <li>• Ստացված արդյունքների համադրում հենանիշի մյուս մասնակիցների կողմից ստացված արդյունքների հետ:</li> <li>• Հաշվետվության մշակում՝ ներառյալ եզրակացություն մոդելի վալիդացման վերաբերյալ:</li> </ul> <p><b>3.4 «Արոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներ:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Նոր օրենքի նախագծի մշակում՝ համաձայն ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի հետ համաձայնեցված օրենքի բովանդակության.       <ul style="list-style-type: none"> <li>- ԵՄ հետ CEPA համաձայնագրով նախատեսված միջուկային և ռադիացիոն անվտանգության ոլորտի դիրեկտիվների ուսումնասիրություն և օրենքի բովանդակության լրամշակում (ըստ անհրաժեշտության):</li> <li>- Օրենքի նախագծի մշակում և պարբերական (ամսեկան) ըննարկում ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի հետ:</li> </ul> </li> </ul> <p><b>3.5 Միջազգային փորձի հիման վրա ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի կողմից ՀԱԷ-ում իրականացվող ստուգումների պլանավորման և անցկացման մեթոդաբանության, ինչպես նաև ստուգումներն անցկացնելու ընտրված ուղեցույցների մշակում:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ստուգումների պլանավորման և անցկացման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն:</li> <li>• ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի ստուգումների պլանավորման և անցկացման կարգի ուսումնասիրություն:</li> <li>• Ստուգումների պլանավորման և անցկացման ոլորտում ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի և միջազգային փորձի հիման վրա ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի կողմից ՀԱԷ-ում իրականացվող ստուգումների պլանավորման և անցկացման մեթոդաբանության վերաբերյալ առաջարկների ներկայացում:</li> <li>• ՀԱԷ-ում ստուգումների անցկացման ուղեցույցների ընտրություն և մշակում՝ փորձնական կիրառման համար:</li> </ul> <p><b>3.6 «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության պահանջները» փաստաթղթի լրամշակում (ճառագայթային անվտանգության նորմերի և կանոնների միացում):</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• "EU Concil Directive 2013/59/EURATOM. Basic safety standards for protection against the dangers arising from exposure to ionising radiation" փաստաթղթի ուսումնասիրում և համեմատական վերլուծություն IAEA GSR Part 3-ի հետ:</li> <li>• «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության պահանջները» փաստաթղթի բովանդակության նախագծի լրամշակում և համաձայնեցում Կոմիտեի հետ:</li> <li>• «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման</li> </ul>					
--	--	--	--	--	--	--	--

		<p>արդյունքների անվտանգության պահանջները» փաստաթղթի լրանշակում համաձայն Կոմիտեի հետ համաձայնեցված բովանդակության:</p> <p><b>3.7 Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի մասնագետների համար ճառագայթային անվտանգության և պաշտպանության վերաբերյալ ուսումնական դասընթացների ծրագրի մշակում:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի մասնագետների վերապատրաստման ոլորտում ԱԷՄԳ համանման/ոլորտային դասընթացների ծրագրերի և նյութերի վերլուծություն:</li> <li>• Միջազգային այլ կազմակերպությունների կողմից անցկացված համանման/ոլորտային ուսումնական դասընթացների ծրագրերի և նյութերի վերլուծություն:</li> <li>• ՀՀ-ում առկա/գործող համանման/ոլորտային ուսումնական դասընթացների ծրագրերի և նյութերի վերլուծություն:</li> <li>• Վերլուծության արդյունքների և Կենտրոնում ներդրված ոլորտային ուսումնական ծրագրերի հիման վրա արդյունաբերական և բժշկական կազմակերպությունների մասնագետների համար ճառագայթային անվտանգության և պաշտպանության վերաբերյալ ուսումնական դասընթացների ծրագրի մշակում:</li> </ul> <p><b>3.8 Միջուկային և ճառագայթային անվտանգության ոլորտի ՀՀ օրենսդրության համապատասխանեցում ԵՄ դիրեկտիվներին:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ԵՄ դիրեկտիվների (CEPA համաձայանագրով նախատեսված) ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն ՀՀ գործող օրենսդրության հետ՝ ներառյալ գործող ՌԴ կարգավորող փաստաթղթերը և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտները:</li> <li>• Անհամապատասխանությունների ցանկի և գործողությունների ծրագրի մշակում՝ համաձայն CEPA համաձայանագրով նախատեսված ժամանակացույցի:</li> <li>• Անհամապատասխանությունների ցանկի և գործողությունների ծրագրի նախագծի պարբերական (ամսական) քննարկում ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի հետ:</li> </ul> <p><b>4. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ</b></p> <p><b>4.1 Տեխնիկական աջակցություն ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին և լիցենզավորման գործունեությանը:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեխնիկական աջակցություն ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի 2019 թ. ստուգումների պլանի մշակմանը:</li> <li>• ՄԱԿ ՊԿ կողմից իրականացվող ստուգումների ընթացքում աջակցություն հետևյալ ուղղություններով՝ ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ, դոզիմետրիկ և ռենտգենյան ճառագայթահարիչների երկարատև կայունության չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:</li> <li>• Կարգավորող հսկողությունից դուրս գտնվող ռադիոակտիվ արդյունքների կամ ռադիոնուկլիդներով աղտոտված տարածքների և իրերի հայտնաբերման վայրերում ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ և դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:</li> <li>• ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի կողմից իրականացված ստուգումների ժամանակ լիցենզավորված անձի կողմից ներկայացված ճառագայթային անվտանգությունը հիմնավորող</li> </ul>				
--	--	---	--	--	--	--

		<p>փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Միջուկային և ռադիոակտիվ նյութերի, զենեքացնող ճառագայթման աղբյուրների հետ գործունեության լիցենզավորման արձնչվող փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:</li> <li>• ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի անձնակազմի արտաքին ճառագայթահարման դոզաների հսկողություն՝ անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:</li> </ul> <p><b>4.2 ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում փարվա ընթացքում:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի՝ ներառյալ իրնացնող ճառագայթման աղբյուրների ազգային ռեզիստրի (RASOD), լիցենզիաների և թույլտվությունների ռեզիստրի (AUTHORIZATION), իրնացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող/օգտագործած օբյեկտների ռեզիստրի (LICENSEES), քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգի (TESTING), միջուկային նյութերի ռեզիստրի (NUCMAT LOF), տեսչական գործունեության գրանցման ռեզիստրի (INSPECTION), անհատական դոզաների գրանցման ռեզիստրի (OCCUDOSE), ինչպես նաև փաստաթղթերի և հանձնարարությունների գրանցման ռեզիստրի (WORKUS) տեխնիկական սպասարկում և կատարելագործում (ըստ անհրաժեշտության), համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:</li> </ul> <p><b>4.3 Աջակցություն ԱԷՄԳ-ի միջուկային տեղեկայանքներում պատահարների վերաբերյալ հաշվետվությունների (IRS) և միջուկային տեղեկատվության (INIS) համակարգերում մասնակցության հետ կապված Կոմիտեի սպանձնած պարտականությունների կատարմանը:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• IRS համակարգին ներկայացնելու համար ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարների մասին տեղեկությունների հավաքում և գնահատում:</li> <li>• IRS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:</li> <li>• IRS-ից ստացված նյութերի ուսումնասիրում, վերլուծություն, ՀԱԷԿ-ում նմանատիպ միջադեպերի առաջանալու հնարավորության և հետևանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և շահագրգիռ կողմերին տրամադրում:</li> <li>• INIS համակարգին ներկայացնելու համար ՀՀ գիտական ամսագրերում տպագրված և INIS-ի թեմատիկային վերաբերվող հոդվածների մասին տեղեկությունների հավաքում:</li> <li>• INIS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:</li> </ul> <p><b>4.4 Աջակցություն ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի վթարային կենտրոնի և պահեստային կենտրոնի աշխատանքներին:</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Մասնակցություն ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի վթարային կենտրոնի վարժանքների կազմակերպմանը և անցկացմանը. <ul style="list-style-type: none"> <li>- վարժանքների սցենարների մշակում,</li> <li>- վարժանքների անցկացում,</li> <li>- վարժանքների արդյունքների ամփոփում:</li> </ul> </li> </ul>					
--	--	---	--	--	--	--	--

- ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի վթարային կենտրոնի հրահանգների լրամշակում՝ հաշվի առնելով վարժանքների ժամանակ տրված դիտողությունները:
- ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի վթարային կենտրոնի հրահանգների էլեկտրոնային տարբերակների (ծրագրային փաթեթների) տեղադրում, մասնավորապես
  - հերմետիկ գոտում ջրածնի հնարավոր կուտակման և պայթյունի կանխորոշում,
  - ակտիվ գոտու վիճակի և հնարավոր արտանետումների գնահատում:
- ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի վթարային կենտրոնի անձնակազմի ուսումնական դասընթացների մշակում և անցկացում:

**4.5 Մասնակցություն ՋՋԷՌ- շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ԱՀԳ և ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբերի գործունեությանը:**

- ՋՋԷՌ- շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ԱՀԳ աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, մասնակցություն աշխատանքային խմբի գործունեության պլանավորմանը:
- ՋՋԷՌ- շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:
- Մասնակցություն ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ԱՀԳ և ռեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբերի հանդիպումներին:

**5. Նոր մասնագետների պատրաստում ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի և Կենտրոնի համար**

**5.1 ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի և Կենտրոնի համար նոր մասնագետների պատրաստման աշխատանքներ (4 պատրաստվող մասնագետներ):**

- Մասնագետների պատրաստման ծրագրերի մշակում/վերամշակում:
- Մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում:
- Նոր պատրաստվող մասնագետների համար դասընթացների փուլերի կազմակերպում և անցկացում:
- Նոր պատրաստվող մասնագետների գիտելիքների պարբերական ստուգում:

**6. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ**

**6.1 ՀՀ փարածքում խմելու ջրի և հանքային ջրերի ռադիացիոն մոնիթորինգ (սահմանափակ ծավալով):**

- ՀՀ բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման ցանցի և աղբյուրների վերաբերյալ անկա տեղեկատվության ուսումնասիրում:
- Ուսումնասիրման արդյունքում խմելու ջրում ռադոն գազի մոնիթորինգի ցանցի, չափումների պարբերականության և չափումների իրականացման մեթոդակարգի մշակում:
- ՀՀ-ում խմելու ջրում ռադոն գազի կոնցենտրացիայի չափումների իրականացում՝ համաձայն մշակված մեթոդակարգի և ՀՀ ԿԱ ՄԱԿՊԿ-ի համաձայնեցված

		<p>աշխատանքային պլանի:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Խմելու ջրում ալֆա ճառագայթող ռադիոնուկլիդների զոմարային ակտիվության չափում, ներառյալ նմուշառում և նմուշների վերամշակում:</li> <li>• ՀՀ տարբեր վայրերի հանքային ջրերում ռադոն գազի կոնցենտրացիայի չափումների իրականացում:</li> <li>• Հաշվետվության մշակում:</li> </ul>					
--	--	---	--	--	--	--	--

\* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավելի փնել, քան փվյալ րարվա ղեկվոներրի 15 ը:

\*\* Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պապվիրարտի կողմից առաջարկված պապվեր - առաջադրանքների:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության  
կարգավորման ՊԿ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
ՀՀ ՖՆ գործառն. Կարչ.  
ՀՀ 900011040020  
ՀՎՀՀ 02705793  
Աշխատակազմի ղեկավարի պ/կ  
Գ.Մանոյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության  
գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
Ինելորանկ  
ՀՀ 2052022100061001  
ՀՎՀՀ 02558849  
Տնօրենի մ/լ  
Ա.Ամիրջանյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Հ դրամ

Ծառայության																
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50531140/1	Փորձաքննության ծառայություններ			6 727 500	23 546 000	23 546 000	23 546 000	40 365 000	40 365 000	40 365 000	40 365 000	67275905	67275905	67275905	67275905

\* Վճարման ներթափանցիկ գումարները ներկայացվում են ածողական կարգով:

\*\* Հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

«Հ ՀԱ միջուկային անվտանգության  
 կարգավորման ՊԿ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 «Հ ՖՆ գործառն. Վարչ.  
 «Հ 900011040020  
 «Հ «Հ 02705793



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության  
 գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Ինսկրանկ  
 «Հ 2052022100061001



**Պայմանագրի կողմ**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**Պատվիրատու**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

«    »    »    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    »    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    »    » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

		Մատուցված ծառայությունների					
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի /
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համատոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

**Ծառայությունն ընդունեց**

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) մինչև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կգրան անասֆիզ պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն